



**ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԱԶԳԱՅԻՆ ՊԼԱՏՖՈՐՄ**

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՖՈՐՈՄ

## **ԱՂԳ ՔՀՖ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԼԱՏՖՈՐՄԻ**

### **ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ**

#### **Ուկրաինայի դեմ Ռուսաստանի սկսած պատերազմի վերաբերյալ**

4 մարտի, 2022թ.

2022թ. փետրվարի 23-ին Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը հայտարարեց Դոնբասում հատուկ ռազմական գործողություն սկսելու մասին, ինչին հետևեց մի քանի ուղղություններով ռուսական զինված ուժերի լայնածավալ հարձակումն Ուկրաինայի Հանրապետության վրա: Պատերազմական գործողություններն առայսօր շարունակվում են՝ դառնալով մեծ թվով մարդկային զոհերի, վիրավորների, փախստականների, բնապահպանական, տնտեսական և մշակութային աղետի, մի ամբողջ ծաղկուն պետության քայքայման պատճառ:

ԵՄ Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորումի Հայաստանի ազգային պլատֆորմը դատապարտում է պատերազմական գործողությունների սանձազերծումը:

Մենք՝ որպես մեր դեմ իրագործված հարձակողական պատերազմների հետևանքներին առայսօր առերեսվող ժողովուրդ, անընդունելի ենք համարում 21-րդ դարում միջազգային խնդիրներ լուծելիս ապավինումը պատերազմին, երբ միջազգային իրավունքն ու դիվանագիտական հարաբերությունները զարգացրել են անհրաժեշտ ողջ գործիքակազմը խնդիրները խաղաղ և դիվանագիտական միջոցներով կարգավորելու համար: Այսօր տեղի ունեցողը ևս մեկ անգամ ցույց է տալիս, որ պատերազմը չդատապարտելը պարարտ հող է ստեղծում անպատժելիության և նոր պատերազմների համար:

Անհրաժեշտ է օր առաջ գիտակցել, որ կատարվածն անդառնալի հարված է հարյուրամյակներ կողք կողքի ապրած երկու ժողովուրդների հարաբերություններին, և գալիք սերունդները դա չեն ներելու: Ցանկացած ժողովուրդ արժանի է խաղաղ կյանքի ժողովրդավար և ինքնիշխան պետությունում:

Համոզված ենք, որ միջպետական և ազգամիջյան ցանկացած խնդիր պետք է լուծվի բանակցություններով՝ միջազգային իրավունքի հիմնարար նորմերի, այդ թվում՝ ազգերի ինքնորոշման սկզբունքին համապատասխան:

Ի հավելումն ուկրաինացի փախստականներին ապաստան տրամադրելու ՀՀ կառավարության կողմից արդեն արված հայտարարությանը՝ կոչ ենք անում նրան հետևել այն



**ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԱԶԳԱՅԻՆ ՊԼԱՏՖՈՐՄ**

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՖՈՐՈՒՄ

պետությունների օրինակին, որոնք սկսել են մարդասիրական օգնություն տրամադրել Ուկրաինային՝ ստեղծված աղետը մեղմելու, քաղաքացիների առաջնային կարիքները հոգալու նպատակով:

Սույնով մեր ամուր և սրտանց զորակցությունն ենք հայտնում ուկրաինացի ժողովրդին, մաղթում կորով և համբերություն և հույս տաձում, որ մղձավանջը շուտով կավարտվի, և կվերահաստատվի խաղաղություն՝ հնարավորություն տալով ձեզ՝ շարունակելու կերտել ձեր ժողովրդավարությունը: